որ եկեղեցու նախնական արձանագրութիւններից մէկն է. ոմն Կուկորի կողմից, որ իւր տունը, այգին, ջրաղացը և երկու աղբին հող նուիրում է Ամենափրկչին: Վանքի արեւմտա—հիւսիսային անկիւնում մի խաչքարի մօտ սոյն Կուկորի գերեզմանաքարն է, հետեւեալ արձանագրութեամբ.

Թվ. ՈՂԵ. | փոխեցաւ | պարոն Կուկորն ի քՙ յի | չեցէք յա | ղաւթս ձե:

«Պարոն» տիտղոսը ԺԳ. դարում նորա իշխանական ծագումն է հաստատում. որոշել չենք կարող ո՛ր տոհմից, բայց, հաւանօրէն, Պահլաւունեաց մի ճիւղի, որոնց սեպհականութիւնն էր այս վանքը Սիմէոն Երեւանցու և այլ աւելի հին գրաւոր յիշատակարանների վկայութեամբ, որ կ՚տեսնենք հետեւեալ գլխի մէջ:



Պատկեր 5

Նկ. ակադեմիկ Ամիրնոֆ

Բրի եկեղեցին (տե՛ս պատկ. 1). արեւելեան տեսարան.

Կուկորի արձանագրութիւնից բարձր, լուսամուտի ձախ կողմը, Մխիթար «վարդպետ»ինն է, որ այստեղ քարգործ, ճարտարապետ է նշանակում. նա «հրամանաւ